

## ՄՐՑՈՒՅԹ

### Micro Focus արտադրության SS համակարգերի ղեկավարման և մոնիթորինգի համակարգի ծեռք բերման

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է Micro Focus արտադրության SS համակարգերի ղեկավարման և մոնիթորինգի համակարգի ծեռք բերման մրցույթ համաձայն սույն հայտարարության կից հավելված 1-ի:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձիք, որոնք կներկայացնեն առաջարկվող համակարգի արտադրող կազմակերպության պաշտոնական գործընկեր լինելու և արտադրողի կողմից տվյալ մատակարարումն իրականացնելու համար հավաստագրում ստանալու վերաբերյալ փաստաթղթեր, որոնք գործում են մրցույթի անցկացման և մատակարարման իրականացման ամբողջ ժամանակահատվածում (Manufacturer Authorization Form): Աշխատանքների ամբողջական նկարագիրը կտրամադրվի հաղթող կազմակերպությանը՝ տեղեկատվության գաղտնիության պայմանագիրը ստորագրելուց հետո:

Մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերը պետք է ընդգրկեն՝

- գինը ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
- վճարման պայմանները,
- ծրագրային համակարգի մատակարարման, տեղադրման և առկա սարքավորումների հետ ինտեգրման աշխատանքների ժամկետները
- երաշխիքային սպասարկման պայմանները և ժամկետը:

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող առաջարկի գործողության ժամկետը պետք է լինի առաջարկների ուղարկման օրվանից սկսած 15 օրից ոչ պակաս:

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկների ամփոփելը ցանկացած պահին դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր



ստացած հայտերից՝ առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև: Մրցութային առաջարկները ներկայացնել ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք, 8-րդ հարկ («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք)՝ փակ ծրարով: Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 23.09.2022թ.-ը, ժամը 17.00 ներառյալ:

Հավելված 1

Support Description	Quantity
Operations Bridge Premium Edition Unit SW E-LTU	110
Network Operations Management Suite Premium Edition 10 Units SW E-LTU	4

